խապատրաստականի, որոց մէջ դասախօսողներ կլինին Ձեմարանի Երրորդ Լսարանի ուսանողք առաջնորդութեամբ մանկավարժ Պ. Սեդրակ Մանդինեանցի:

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

ՄՏԻՑ ԵՒ ԴԱԼՈՒՑ ԳԱՆՁԱԿԱՑ ԱՂՔԱՏԱՑ ԽՆԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1876 ԹՈՒԻՑ ՄԻՆՁԵՒ 1882 ԹՒԻՆ:

Կազմեալ 27-ն Փետրվարի 1882 ամի

ՄՈՒՏՔ.	1876 թուից ց 1881 թուի Յունվարի 7		1881 թուից ստացուած անդամական վճարներ.		1881 թուում ստացուած անդամ. վճարներ 1882 թ. համար		Ամբողջ գումար		Մնացեալ տպարակ.	
	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.
Ընկերութիւնը ունեցել է ի սկզբանէ անտի ցվերջ 1881 ամի հիմնադիր անդամներ տասը, որոց անդամական վճարը հասնում է 3350 բուբ. այս գումարից ստացուած է.	950		150				1100		2250	
Անփոփոխ անդամներ 11, որոց անդամական վճարի գումարը հասնում է 550 բուբ. այս գումարից ստացուած է.			130				130		420	
Տարեկան անդամներ 75 որոց անդամական վճարը հասնում է 242 բուբ. և 1881 թուականում ստացուած է 1882 թուականի համար անդամական վճար 102 բուբ. ամէնն 344 բ. այս գումարից ստացուած է.	23		134		102		259		85	
Տոկոս դրամոց 1016 բուբ. 20 կ. որի մէջ հաշուած է 1882 թուի 1400 բուբլու հինգ ամսուայ տոկոսն.			1016	20			1016	20		
Միանուագ նուիրատուութիւն թէ բանաւոր կտակներով և թէ ի յիշատակ ննջեցելոց իւրեանց.	693	30	11				704	30		
Կառքի (բալտախինի) վարձ.	31		27				58			
Գանձանակագրամ.			59	10			59	10		
Ընդամենն է.							3326	60	2755	

ՄԱԽՔ.	Ընթացք 1881 ամի. Ր.	Կ.
Դիւանական ծախուց համար տուած է.	24	61
Օտարական աղքատների բնակութեան տան վարձ է տուած.	10	
Տեղական 17 աղքատ ընտանիքի համար տուած է.	160	
Օտարական աղքատներին տուած է ճանապարհածախք.	40	
Աղքատանոցում բնակուող աղքատների համար եղած է ուտելիքի և վառելիքի ծախք.	25	29
Մէկ օտարականի թաղման համար եղած է ծախք.	3	30
Ընդամենն . .	263	20

ԴԱՆՈՒԹԻՒՆ. ա. Երկու հարիւր վաթսուն երեք բուբլ. քսան կոպէկ ծախքը 3326 բուբլ. 60 կոպէկ մուտքից հանելով մնայ առ 1-ն Յունվարի 1882 ամի պատրաստի գումար երեք հազար վաթսուն երեք բուբլ. քառասուն կոպէկ.

բ. 2755 բուբլ. ապառիկի մէջ հաշվումէ Նարաթեանցի 1400 բուբ. որը տարեկան 100 բուբ. տալով լրացնելու է 14 տարումը համաձայն իւր ստորագրութեան, և Յովհաննէս Իսահակեանցի 500 մանէթն, որ լրացնելու է տասը տարումը.

Նախագահ Ժողովոյն Աղաբէկ Քալանթարեան

Ղ. Ս. Յովհաննիսեան
Մկրտիչ Բ. Աթանասեան
Անդամք Յակոբ Լիսեան
Մարտիրոս Նաբաթեանց
Աղէքսանդր Իսահակեան
Առանձնագրիր Գ. Բաբայեան.

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ.

Յորմէ հետէ պ. Ծերօն Աստուածատուրեան, այն ազգասէր և օգտակար հոգաբարձուն, բառերու բացարձակ նշանակութեամբ, 30 ամեայ այս պաշտօնատարը յակամայիցն ստիպուեցաւ ձեռք քաշել դպրոցէն, դպրոցի դրութիւնը օր քան զօր վատթարացաւ.

Նոր հոգաբարձուք հապճեպով ձեռնարկեցին յԱրարատ խմբագրեալ ծխական դպրոցաց այն ծրագիրը քննադատելով, դատափետել և անյարմար համարել զայն, որ շաբաթը միայն 6 դաս ուսներէն և 18 դաս հայերէն առարկաներու ժամանակացոյց մ' կը պարունակէ յինքեան. Ինչպէս ըսի, անյարմար դատեցին աս ժամանակացոյցը, և խմբագրեցին